

ՀՏԴ 373.016:811.19

<https://doi.org/10.67819/30453267-26.1kb1-04>

ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԲԱՌԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Աշխեն Լ. Յուզբաշյան

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ,
Երևան, Տիգրան Մեծի պող., 17 շենք,
e-mail: ashkhenyuzbashyann@gmail.com
0000-0002-7726-857X

Ամփոփում

Սույն հոդվածում անդրադարձել ենք խորհրդանշական բառերի իմաստային և լեզվական քննությանը: Քանի որ մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չէ այս ծավալուն հարցի քննությունը, ուստի որոշակի սահմանափակումներ ենք կատարել: Քննել ենք խորհրդանշական բառերը գեղարվեստում՝ մեծ ուշադրություն դարձնելով այս բառերի իմաստագործական դաշտին: Բնագրային նյութի ընտրությունը կատարել ենք տարածամասնակավորման սկզբունքով՝ ընտրելով 5-20-րդ դարերի բնագրեր, այդ թվում նաև թարգմանական գրականություն՝ ցույց տալով, որ նույնիսկ թարգմանական դաշտում խորհրդանշական բառերը կայուն են: Քննել ենք խորհրդանշական բառեր հոգևոր, գեղարվեստական, գիտական տեքստերում՝ փորձելով ցույց տալ այդ բառերի իմաստային շերտերը, երբեմն դրանց հասկացությունների վերաձվելը, ինչպիսիք են ազատությունը, ապստամբությունը, ընդվզումը, լույսը, գիշերը և այլն:

Անդրադարձել ենք այդ բառերի ուսուցման որոշ առանձնահատկությունների, մասնավորապես ավագ դպրոցում, նախագծային ուսուցմանը: Մենք կարևորում ենք նախագծային ուսուցումը հատկապես հայոց լեզվի դասերին, քանի որ դրանք նպաստում են սովորողներին կատարելու ինքնուրույն գիտական հետազոտություններ, այն ներկայացնելու լսարանին, ինչպես նաև ստեղծելու գիտական արժեքներ, այո՛, արժեքներ, քանի որ այդ վերջնարդյունքները սովորողների ինքնուրույն հետազոտությունների արգասիքներն են:

Հիմնաբառեր. խորհրդանիշ, այլաբերություն, փոխաբերություն, ճանաչողական լեզվաբանություն, տեքստի կոդ, իմաստաբանություն:

Նորույթը

Սույն հոդվածում փորձել ենք բառը ուսումնասիրել իմաստային դաշտում՝ ցույց տալով գեղարվեստում նրա վերաձվելը խորհրդանիշների: Բառապաշարի տարբեր շերտերի ուսումնասիրությունը հետաքրքիր է և կարևոր: Տարբեր ժամանակներում լեզվաբանները անդրադարձել են

այս հարցերին, ինչպես Վ. Առաքելյանը «Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության (V դար)», Փ. Մեյթիխանյանը «Աստվածաշնչի հատկանվանագիտություն», Ա. Աբաջյանը, Ն. Դիլբարյանը, Ա. Յուզբաշյանը, Ս. Կարապետյանը «Գրաբարը՝ որպես արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և տերմինաշինության աղբյուր» աշխատություններում: Մեր հետազոտության նորույթն է գեղարվեստում բացահայտել խորհրդանշի բառերը, փորձել ցույց տալ այն ճանապարհը, որ համագործածական բառաշերտի բառը վերածվում է խորհրդանշի, ինչպես նաև անդրադառնալ այդ բառերի ուսուցմանը ավագ դպրոցում՝ կարևորելով դրանց դերը մարդու լեզվամտածողության ձևավորման մեջ:

Ներածություն

Բառապաշարը պատմական կարգ է. այն լեզվի պատմական զարգացման ընթացքում անընդհատ փոփոխվում է, լրացվում, կատարելագործվում: Բառապաշարը լեզվի կառուցվածքային բաղադրիչներից ամենազգայունն է: Այն արտահայտում է հասարակական-տնտեսական կյանքի, գիտության, մշակույթի մեջ տեղի ունեցող փոփոխությունները, զարգացումները:

Բառապաշարի և հատկապես բառերի գործառական առանձնահատկությունները, խոսքում ձեռք բերած լրացուցիչ նրբերանգները հետաքրքիր են և հետազոտվում են լեզվաբանության իմաստաբանություն ճյուղում[1]: Դրանց առանձնահատկությունները պայմանավորված են նախ ընթերցողի աշխարհընկալմամբ, որի մասին հանգամանալից անդրադարձել է Ումբերտո Էկոն՝ հեղինակ և ընթերցող հարաբերությունների քննությամբ: Ընթերցողը կարող է ցուցաբերել տարբեր վերաբերմունք տեքստի նկատմամբ. ստեղծել իր վարկածները կարդացածի մասին, իր բացատրությունները, իր զգացմունքները՝ ընդ որում մակդիրների, փոխաբերությունների ընկալումը խիստ անհատական է[2]: Հետազոտության մեջ փորձել ենք ցույց տալ այն ճանապարհը, որով համագործածական բառաշերտի բառը գրողի գրչի տակ վերածվում է խորհրդանշի: Խորհրդանշական բառերի առանձնահատկություններից է միայն տվյալ երկում այդ իմաստների արտահայտումը: Այսինքն իմաստային դաշտի տվյալ ընկալումը պայմանավորված է երկու գործոնով՝ հեղինակով և ընթերցողով: Հոգվածի երկրորդ մասում ներկայացրել ենք այդ բառերի ուսուցումը ավագ դպրոցում՝ կարևորելով դրանց դերը սովորողի լեզվամտածողության ձևավորման գործընթացում:

«Խորհուրդ» նշանակող բառերը գրականության մեջ մեծ հետաքրքրություն են ներկայացնում և կարևոր են տվյալ երկի ընկալման համար: Գրականագետը բացատրում է այդ բառերը՝ փորձելով ընթերցողներին փոխանցել որոշակի բանալիներ նյութի ընկալման համար, իսկ լեզվաբանության տեսանկյունից այս բառերի ուսումնասիրությունը բացահայտում է իմաստային նորանոր դաշտեր՝ այս բառերի գործառական կիրառություններում[3]: Գրաքննադատության մեջ հոգեբանության ներկայացուցիչները փորձել են նույնիսկ բուն տեքստը օգտագործել իբրև հեղինակի մասին տեղեկությունների արձանագրման աղբյուր, հեղինակի աշխարհընկալումը, մտածողությունը, ազգային մշակույթը արտահայտելու միջոց: Յ. Լոտմանը արվեստը և գրականությունը համարում է մոդելավորող համակարգեր, արվեստի ստեղծագործությունը՝ այդ լեզվով տեքստ[3]: Սույն հետազոտության մեջ բացահայտելով գեղարվեստում բառերի խորհրդանշական գործառական դաշտը՝ փորձել ենք ցույց տալ, թե ինչպես է «բառը» վերածվում հասկացության:

Համամարդկային հասկացությունները, ինչպիսիք են «ազատությունը», «ապստամբությունը», «սերը», «լույսը» և այլն, գրողները ներկայացնում են ամենատարբեր մոտեցումներով: Գեղարվեստական ստեղծագործության տեքստային վերլուծության տեսանկյունից մենք անդրադարձել ենք մի քանի բառերի իմաստային դաշտի վերլուծությանը գեղարվեստական և գիտական տեքստերում՝ բացահայտելով նրանց հասկացական արժեքը: Մեր հետազոտության մեջ կան որոշ սահմանափակումներ՝ կապված նյութի ծավալային բավական ընդգրկուն լինելով: Տեքստերում խորհրդանշական բառերի ուսումնասիրությունը մեր կողմից շարունակելի է, մասնավորապես հին հայերենյան բնագրերում: Սույն հետազոտության մեջ հետաքրքիր են բնագրերի ընտելությունը, որը ներառում է 5-20-րդ դարեր, հոգևորից աշխարհիկ, ինչպես նաև թարգմանական գրականություն: Նպատակն է ցույց տալ, որ խորհրդանշական բառերը՝ անկախ նյութը թարգմանական է, թե ոչ, բնագրում և թարգմանական տեքստում ցուցաբերում են իմաստային կայունություն:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտությունը կատարված է ճանաչողական կամ կոգնիտիվ լեզվաբանության դաշտում, որը ծագել է մի շարք գիտաճյուղերի փոխազդեցության հետևանքով, ուսումնասիրում է լեզվի և գիտակցության, լեզվի և մտածողության փոխադարձ կապի հարցերը, բացատրում է լեզվի զարգացումները մտածողական կարգերի միջոցով: Ճանաչողական լեզվաբանությունը սերտ առնչվում է իմաստաբանությանը, որը թույլ է տալիս լեզվական իմաստների հետևում տեսնել ընդհանուր հասկացական կարգեր և դրանք դիտարկել որպես ճանաչողության միջոց աշխարհընկալման գործընթացում[4]:

Տարաժամանակյա սկզբունքով տրված են մի շարք բառերի գործառական-իմաստային դաշտերը, ինչպես նաև գործածված են համեմատական, զուգադրական, վիճակագրական մեթոդներ[5]:

Հետազոտություն

Բառը այն կարևոր իրողությունն է, որի միջոցով ճանաչում ենք աշխարհը: Նրանց գործառական դաշտը այնքան բազմազան է և հետաքրքիր: Սույն հետազոտության մեջ մենք փորձել ենք անդրադառնալ գեղարվեստում խորհրդանշական բառերին, ցույց տալ, թե բառը գեղարվեստում, ընդլայնելով իր իմաստագործառական դաշտը, ինչպես է վերածվում խորհրդանշի, ավելին, նույնիսկ սահմանելի հասկացությունների:

Խորհրդապաշտությունը՝ որպես գրական ուղղություն, առաջացել է Ֆրանսիայում և տարածվել եվրոպական և ռուսական գրականության մեջ: Խորհրդապաշտությունը բերում է որոշակի խորհրդանշաններ: Այն շեշտում է իրականության թաքնված հոգևոր իմաստները, ի տարբերություն ռեալիզմի օգտագործում է խորհրդանշաններ (սիմվոլներ)՝ երևույթների էությունը արտահայտելու համար: Այսպես, օրինակ, «գիշեր» բառը, ըստ Է. Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի», նշանակում է օրվա մի մասը՝ մայրամուտից մինչև լուսաբաց, փոխաբերական իմաստով՝ խավար, մռայլություն, տխրություն, ինչպես նաև սև սաթ[6]:

Վ. Տերյանի հոգեկերտվածքում այն պատկերվում է «Իջնում է գիշերն անգութ ու մթին», «գութկան գիշերներ» իմաստային նրբերանգով, Մ. Մեծարենցի հոգեկերտվածքում՝ «Ամբողջ հատորը գրեթե սպասման երկարածիգ գիշեր մըն է», «Գիշերն անոյշ է, գիշերն հեշտագին», «ցնծագին գիշեր» իմաստային նրբերանգով:

Հետաքրքիր մի անդրադարձ կատարենք Մ. Մաշտոցի շարականներին.

«Գո՛րծք Տեառն, ըզՏէր օրհնեցէ՛ք

և բա՛րձր արարէք ըզՆա յաւիտեան:

Տի՛ւր և գիշե՛րք, ըզՏէր օրհնեցէ՛ք

և բարձր արարէք ըզՆա յաւիտեան»[Մ, 18]:

Այս բառի երեք կիրառությունները 5-20-րդ դարերում բացահայտում են իմաստային դաշտը: Հեղինակներից մեկի գրչի տակ այն «անգութ» է, մինչդեռ մյուսի համար «անոյշ» է: Մեծն Մաշտոցը անձնավորում է իբրև Աստծո գործերից մեկը, որը պիտի գովերգի Աստծո փառքը:

Երբ խորհրդանշական բառեր էինք փորձում առանձնացնել գրականության մեջ, ակամա կանգ առանք «լույս» բառի վրա: «Լույս» բառը Աստվածաշնչում խորհրդանշում է Հիսուս Քրիստոսին: «Սկզբից էր Բանը, և Բանը Աստծո մոտ էր, և Բանը Աստված էր: Նա սկզբից Աստծո մոտ էր: Ամենայն ինչ նրանով եղավ և առանց նրան չեղավ ոչինչ, որ եղել էր: ԵՎ այդ կյանքը մարդկանց լույս էր: ԵՎ լույսը խավարի մեջ լուսավորում է, և խավարը նրան չնվաճեց: Կար մի մարդ՝ Աստծուց ուղարկված...Ինքը լույսը չէր, այլ եկել էր, որ վկայի լույսի մասին»[Յ, Ա, 1-8]: Նոր կտակարանում՝ Հովհաննեսի Ավետարանում, Ա գլուխը նվիրված է լույսին: Հիսուսի խորհրդանշան է նաև վարդը. «Գոհար վարդն վառ առեալ, ի վէի ի վերայ վարսիցն ծաւալէր ծաղիկ ծովային»[ԳՆ]:

Բառի իմաստային կողմի ուսումնասիրությունը ենթադրում է մի քանի մասնավոր հարցերի պարզաբանում: Կա տեսակետ, որ բառային իմաստը առանձնապես կապ ունի խոսքիմասային իմաստի հետ, ուստի տարբեր խոսքի մասերի պատկանող բառերին տրվել են տարբեր գնահատում՝ կապված իմաստային ամբողջականության կամ ոչ ամբողջականության հետ: Գոյականները բնորոշում են ամբողջական իմաստ ունեցող բառեր, իսկ ձայնարկությունները կամ եղանական բառերը՝ ոչ ամբողջական իմաստ ունեցողներ[7]: Խորհրդանշան բառերի դաշտը պետք է տարբերենք այլաբանությունից: Այժմ անդրադառնանք այլաբանությանը: Այլաբանությունը բնության, կենդանիների կյանքից վերցված, նաև որևէ այլ պատկերի օգնությամբ հասարակական այս կամ այն երևույթի փոխաբերական նկարագիրն է: Այլաբանության բովանդակությունը պայմանական է, նրա բուն իմաստը արտահայտվում է անուղղակի կերպով[8]: Այլաբանական ստեղծագործություններ են առակները, հեքիաթները և այլն: Առակներում, հեքիաթներում խորհրդանշական բառեր և արտահայտություններ, իհարկե, կան, որոնք հատկապես գերիշխում են հրաշապատում հեքիաթներում: Հիշենք Փ. Բուզանդի «Պատմութիւն Հայոց»՝ «Վասակ և Շապուհ» հայտնի երկխոսությունը: «Առյուծ» և «Աղվես» փոխաբերական պատկերներում առյուծը ուժի, մեծահոգության, և աղվեսը թուլության, փոքրության, արտահայտություններ են: «Այժմ քո տեսեալ զիս անձամբ փոքրիկ, ոչ առեր զչափ մեծութեան իմոյ. զի ցայժմ ես քեզ առիծ էի, և արդ աղուէս» [ՓԲ]:

Խորհրդանշական բառերը տեքստերում երբեմն վերածվում են սահմանելի հասկացությունների: Անդրադառնանք Զորջ Օրուելի «ԱնասնաՖերմա» վիպակի մի քանի խորհրդանշական բառերի քննարկմանը: Այսպես՝ ֆերման խորհրդանշում է պետությունը, իսկ նրա

բնակիչները՝ հասարակությունը: Խոզերը ներկայացնում են իշխանավորներին, այսինքն՝ ղեկավարներին: Նապոլեոն խոզը դիկտատորի խորհրդանիշն է, ձնագնդին՝ աշխատավոր, հավատարիմ, շահագործվող ժողովուրդն է, քամու ջրաղացը խորհրդանշում է խոստացված առաջընթացը, շները բռնության գործիք են, ոչխարները՝ անգիտակից զանգված, որ հեշտությամբ ենթարկվում են քարոզչությանը, մարդիկ նախկին ճնշող իշխանությունն են կամ արտաքին թշնամիները:

Հետաքրքիր է իր բովանդակությամբ այս այլաբանական վեպը: Հայ ընթերցողին ծանոթ էին փոքր ծավալի այլաբանական երկեր, օրինակ՝ Գոշի, Այգեկցու առակները: Այլաբանությամբ ասված խոսքը ավելի տպավորիչ է, ունկնդրին հնարավորություն է տալիս նյութը ըմբռնելու՝ ըստ իր հասկացողության: Այլաբանության հիմքը կազմում է մտքի համեմատողական գործառույթը, և այն հաճախ կապվում է ողջ ստեղծագործության հետ, այդ պատճառով հաճախ գործածվում են առակի, հեքիաթի ժանրերում, որտեղ մարդկային հատկանիշները ներկայացվում են հիմնականում կենդանիների միջոցով: Այս կերպ աղվեսը խորամանկության, օձը չարության, նենգության, առյուծը ուժի և հզորության մարմնացումներ են: Այլաբանության վկայություն է վարդի, բլբուլի սիրո այլաբանական պատկերը միջնադարի չափաժողովում[9]: Առակները ունեն խրատական, դաստիարակչական նշանակություն: Առակներով էր մարդկանց կրթում Հիսուս Քրիստոսը: Այսպես Ավետարաններում հանդիպում ենք բազմաթիվ առակների, «Անառակ որդու վերադարձը», «Բարի սամարացին», «Առակ տասը կույսերի մասին» և այլն: Խորհրդանշական բառերը կայուն բառաշերտ չեն: Նրանց իմաստային դաշտի կիրառությունը պայմանավորում են տվյալ երկի բովանդակությունը, երբեմն ներազդելով մարդու ներաշխարհի վրա: Այդպիսի հետաքրքիր կիրառություններ գտնում ենք «Անասնաֆերմա» վիպակում: Առաջին արտառոց երևույթը կենդանիների առաջնորդը խոզ է: Առհասարակ, խոզը առաջնորդ կենդանի չէ: Անասնապահության մեջ նրան պահում են՝ իբրև մսացու կենդանու, այն նույնիսկ գյուղական ինչ-որ գործերում մարդուն չի կարող օգտակար լինել: Հիշենք խոզի մասին հայտնի դարձվածները. «Խոզի պես»՝ շատ կերած, «Խոզերի առաջ մարգարիտներ գցել», «Երբ խոզը ծառը բարձրանա»՝ ներկայացված անորոշ ժամանակով, «պարարտ խոզ»՝ գեր և այլն[10]: Իբրև առաջնորդ խոզը խորհրդանշում է բռնապետի, իսկ բռնապետները ներքուստ քողարկած վախեր և այլ բարոյություններ ունեցող մարդիկ են:

Ստորև ներկայացնում ենք մի շարք խորհրդանշական բառեր Օրուելի «Անասնաֆերմա» վիպակից. Ներկայացնում ենք վիպակում ներկայացված հիմնական խորհրդանիշները.

1. Ֆերման խորհրդանշում է Ռուսաստանը, Խորհրդային Միությունը հեղափոխությունից առաջ և հետո:
2. Հողմաղացը խորհրդանշում է արդյունաբերականացումը:
3. Յոթ պատվիրանները խորհրդանշում են հավասարության սկզբնական սկզբունքները (կոմունիստական գաղափարախոսություն):
4. Դրոշը (կանաչ դրոշ՝ սմբակով և եղջյուրով) խորհրդանշում է նոր սոցիալիստական պետությունը և հեղափոխական ինքնությունը:
5. Ջոնզի տունը խորհրդանշում է իշխող դասը և իշխանության արտոնությունները:
6. Կաթը և խնձորները խորհրդանշում են էլիտայի համար նախատեսված հատուկ արտոնությունները:

7. Մտրակը խորհրդանշում է ճնշումը և բռնապետությունը:
8. Հավաքունը խորհրդանշում է գյուղացիությունը և իշխանության դեմ ապստամբությունը:
9. Ջենք (կրակվում է տարեդարձերի ժամանակ) խորհրդանշում է պետական քարոզչությունը և ռազմականացված տոնակատարությունը:
10. Շաքարաքլոր լեռը խորհրդանշում է կրոնը և կեղծ դրախտի խոստումը:
11. Առևտրային համաձայնագրեր (փող) խորհրդանշում են հեղափոխական իդեալների ապականումը և կապիտալիզմի վերադարձը:
12. Ազատությունը խորհրդանշում է հեղափոխության կենտրոնական խոստումը. ազատագրման խորհրդանիշ, որը աստիճանաբար վերածվում է պատրանքի:
13. Ապստամբությունը խորհրդանշում է Ռուսական հեղափոխությունը. ճնշման տապալումը, բայց նաև նոր բռնապետության սկիզբը:
14. Հավասարությունը խորհրդանշում է Կենդանականության հիմնական իդեալը, որը հետագայում աղավաղվեց («Բոլոր կենդանիները հավասար են...»):
15. Նվիրվածությունը խորհրդանշում է բանվոր դասակարգի կույր նվիրվածությունը:

Հետաքրքիր առանձնահատկություն ևս. վերջին վեպը, որից մենք բերեցինք տասնյակ օրինականեր, թարգմանական գրականություն է, սակայն խորհրդանիշ բառերը և՛ բնագրում, և՛ թարգմանված տեքստերում, միևնույն է, խորհրդանշական բովանդակությունը պահպանում են:

Բառերի իմաստային դաշտի վերլուծության արդյունքում տեսնում ենք, որ բոլոր բառերն էլ համագործածական բառաշերտին պատկանող բառեր են: Պայմանավորված գրողի ասելիքով, նրա վերացարկված մտածողությամբ, այս բառերը վիպակում վերածվել են խորհրդանիշների, որոնք ոչ միայն հեղափոխությանն են վերաբերում, այլ նաև ներագդում են մարդու մտածողության վրա առհասարակ: Այդպիսի հասկացություններ են «ազատությունը», «ապստամբությունը», «հավասարությունը» և այլն:

Այժմ անդրադառնանք խորհրդանիշ բառերի ուսուցման որոշ առանձնահատկություններին: 21-րդ դարը բերեց նոր մտածողություն, նոր աշխարհընկալում, հետևաբար դասավանդման նոր մոտեցումներ: Այս «նոր» հասկացության մեջ գրեթե բոլոր մասնագետները և ինչպես նաև մասնագիտությունները պահանջեցին վերանայել հին մոտեցումները: Ուսուցիչը, որը բավական մեծ պատասխանատվություն է կրում սովորողի մտածողության ձևավորման գործընթացում, պետք է փոխի դասավանդման գործընթացը:

Սովորողին հետաքրքրելը այժմ բավական բարդ գործընթաց է, քանի որ գրեթե բոլոր մարդիկ հետաքրքիր ճանապարհորդներ են երկու աշխարհներում՝ վիրտուալ և իրական կյանքում, դրա հետևանքով նաև թուլացել են սովորողների կենտրոնացման, կենդանի հաղորդակցման կարողությունները: Ուսուցիչը միայն գիտելիք փոխանցողը չէ, քանի որ գիտելիք ստանալու ճանապարհները այժմ փոփոխվել են: Նորարարական մեթոդների և տեխնոլոգիաների մեջ առաջին պլան են մղվում հետազոտական և նախագծային աշխատանքները: Մեր օրերում մարդիկ դարձել են ավելի գործնական, առաջին շարքում են գործնականում կիրառելի գիտելիքները և հարմարավետությունը: Այս իրավիճակում լեզուների, մասնավորապես հայոց լեզվի դասավանդումը պահանջում է արմատական փոփոխություններ:

Սովորողը առաջին հերթին պետք է կարողանա քերականության տեսական գիտելիքները գործնականում կիրառել, ինչպես նաև այդ գիտելիքները պետք է ծառայեն սովորողների

մտածողության, մասնավորապես լեզվամտածողության ձևավորմանը: Երբ ուսումնասիրում էի ժամանակակից մեթոդիստներից մեկին՝ Էլլի Թրեյնին, կարդացի հետևյալը. «Ամբողջ կյանքի ընթացքում սովորող, ճանապարհորդ և բովանդակություն ստեղծող, որը ցանկանում է ուսումնասիրել երկու աշխարհների լավագույնը՝ իրական և վիրտուալ, որը լի է ինտերակտիվ գործողություններով»:

Նորարարական կրթություն չի նշանակում դասավանդման ընթացքում նոր մեթոդների կամ նոր տեխնոլոգիաների կիրառություն՝ ուղղված ուսուցման նոր ռազմավարությունների օգտագործմանը: Նորարարական կրթությունը խրախուսում է սովորողներին ակտիվորեն միանալու և դասերի ընթացքում շփվելու իրենց դասընկերների և ուսուցչի հետ: Սովորողները արդեն ստիպված կլինեն ավելի շատ աշխատելու, որ բավարարեն իրենց կարիքները: Ինչպես գիտենք բոլոր առարկաների, այդ թվում նաև հայոց լեզվի դասագրքերը փոփոխվել են: Հայոց լեզվի դասագրքերում մեծ տեղ է հատկացվում լեզվի գործնական կիրառությանը: Յուրաքանչյուր թեմայի շրջանակներում անպայման տրված է որևէ տեքստ: Տեքստերը տարբեր բովանդակություն ունեն, մասնավորապես գեղարվեստական, գիտահանրամատչելի, գիտական, պատմական և այլն: Լեզվական տեսական նյութ գրեթե տրված չէ, այլ աղյուսակներով տրված են քերականական եզրույթներ: Այդ եզրույթների բացահայտումը իրականացնում է ուսուցիչը: Ուսուցչին տրված է գիտական և ստեղծագործական ազատություն: Ավագ դպրոցի սովորողը հիմնական դպրոցում ուսումնասիրել է լեզվական, քերականական անհրաժեշտ նյութերը, այդ պատճառով ավագ դպրոցում, պահպանելով հաջորդելիության սկզբունքը, սովորողը նախ պետք է հիշի անցած նյութը, ապա ավելացնի գիտելիքները: Վերջինս պետք է անի ուսուցչի միջոցով, քանի որ տեսական նյութի հաղորդման ձևը և միջոցները պետք է ուսուցիչը գտնի: «Բառագիտություն» բաժինը ուսումնասիրվում է վեցերորդ դասարանում, առհասարակ բառերի իմաստային դաշտի վերլուծությունը կատարվում է գրեթե ողջ ուսումնառության ընթացքում[11,12]:

Հիմնական դպրոցում «Հայոց լեզու» առարկայի շրջանակներում ուսումնասիրվում են բառապաշարի բոլոր շերտերը, ուսումնասիրվում է նաև բառի ուղիղ և փոխաբերական իմաստով գործածությունները, հոմանիշները և հականիշները: Ավագ դպրոցում մենք առաջարկում ենք ուսուցանել բառերի իմաստային դաշտը ավելի խորությամբ, որը կնպաստի մտածողության բազմաշերտության զարգացմանը, ինչպես նաև խոսքային մակարդակում գրագետ և ինքնատիպ հաղորդակցմանը: Իմաստային դաշտում խորհրդանշական բառերի ուսուցումը կնպաստի, օրինակ, Ջ. Օրուելի «Անասնաֆերմա» վիպակի իմաստային կողի ընկալմանը:

Այսինքն՝ սովորողին տանում ենք բառերի խորհրդավոր աշխարհ: Սովորողն անցնում է բառերի իմաստային վերլուծության հետաքրքիր ճանապարհ՝ խոզ՝ գոյական-կենդանի նշանակող բառարանային բառից մինչև վիպակում առաջնորդ-բռնապետ բառը: Այս ճանապարհին սովորողին հնարավորություն է ընձեռվում ստեղծագործելու և հորինելու իր աշխարհի խորհրդանշները: Տարիքային տարբեր խմբերին բնորոշ է որոշակի ծածուկ, թաքնված խորհրդանշական մտածողությունը:

«Ազատությունը» հետաքրքիր հասկացություն է, որին ձգտում է մարդը ողջ կյանքում: Այն տարբեր մարդկանց մոտ տարբեր դրսևորումներ ունի: «Ազատ մարդ» բրենդը նույնիսկ սկսեց շրջանառվել մեծ հաջողությամբ, «ազատ մտածողություն», «ազատ ապրել» և այլ ձևերով:

Առաջարկում ենք վիպակի խորհրդանիշներից «Ազատությունը» ուսուցանելիս միջառարկայական կապով սահմանել ազատությունը ըստ հասարակագիտության դասագրքի.

Ազատություն- 1. Ժողովրդի իրավունքը՝ տնօրինելու իր քաղաքական, հասարակական ու մշակութային կյանքը: 2. Ազատ լինելը, ազատի վիճակը: 3. Ուրիշի իշխանությունից զերծ՝ ազատ լինելը: 4. Ճնշումից՝ արգելքից արձակված լինելը: 5. Ազատների դասը: 6. Ազնվականի կոչումը՝ դիրքը: 7. Արտոնություն: 8. Ազատում [6]:

Ազատություն – Անհատի ազատությունը գերակա արժեք է՝ անգամ հավասարության և արդարության համեմատ: Մեկ անհատի ազատությունը կարող է սահմանափակվել միայն մյուս անհատների ազատություններով[13]: Յուրաքանչյուրիս ազատությունը ավարտվում է այնտեղ, որտեղ սկսվում է մեկ ուրիշի ազատությունը: Մինչդեռ վիպակում, «ազատություն» ասելով, բռնություններ էին կատարվում: Քանի որ մեր խնդիրն է բառերի իմաստային դաշտի ուսուցման մասին առաջարկել որոշ մեթոդներ, ապա առաջարկում ենք, օրինակ, օգտագործելով SCS գործիքներ, նկարել խորհրդանիշներ: Կարող ենք ընտրել թե՛ «Անասնաֆերմա» վիպակից, թե՛ ուսուցչի խորհրդով այլ խորհրդանշական բառեր, ինչպիսիք են «լույսը», «գիշերը» և այլն: Այն սովորողները, որոնք կարող են նկարել տարբեր նյութերով՝ ջրաներկ, յուղաներկ և այլն, առաջարկում ենք նկարել առարկայական միջավայրում: Այս աշխատանքը, լինելով փոքր-ինչ բարդ, այնուամենայնիվ սովորողների մոտ զարգացնում է երևակայությունը, վերացարկված մտածողությունը, ինչպես նաև բացահայտում է բառերի ազդեցությունը մարդու ներաշխարհի վրա: Վերջապես «Իմաստաբանությունը» նախընտրելի է ուսուցանել նախագծային աշխատանքի միջոցով:

Ստորև ներկայացնում ենք նախագծի մեկ նմուշ-օրինակ. նախագծի վերնագիր՝ «Բառը գեղարվեստում»: Նախագծի իրականացման փուլերն են՝

- բնագրային օրինակների հավաքագրում և մշակում,
- լեզվաբանական գրականության մշակում,
- բառարանի ստեղծում, աշխատանքի արժևորում, ամփոփում,
- համապատասխան սահիկաշարի ստեղծում,
- նախագծի ներկայացում:

Կիրառված ձևաչափը՝ խմբային աշխատանք՝ ձևավորելով 4 խումբ, բառարանի ստեղծում՝ օգտագործելով բացատրական, ստուգաբանական բառարաններ, սահիկաշարի ստեղծում, բառարանի հրատարակում:

Նպատակը՝

- ծանոթացնել իմաստաբանության նրբերանգներին, բացահայտել գեղարվեստում բառերի կիրառության նրբերանգները,
- ծանոթացնել բառարան ստեղծելու հմտություններին, գիրք հրատարակելու, ձևավորելու նրբություններին:

Խնդիրները՝

- բառարաններից օգտվելու կարողությունների զարգացում,
- գիտական նյութը կարդալու, մշակելու, ներկայացնելու հմտությունների և կարողությունների զարգացում,
- գիրք հրատարակելու և շնորհանդես կազմակերպելու կարողությունների ձեռքբերում:

Վերջնարդյունքը՝ ստեղծել «Հայերենի իմաստաբանական դպրոցական բառարան», որը ներառում է որոշակի թվով բառհոդված՝ համապատասխան բնագրային օրինակներով:

Նախագիծը գործնականում կիրառվել է Բ. Ժամկոչյանի անվան վարժարանում՝ 11-րդ դասարանում:

Եզրահանգում

Ուսումնասիրելով բառերի իմաստային դաշտի որոշ առանձնահատկություններ՝ հանգեցինք հետևյալ եզրահանգումներին.

- Բառերի իմաստային դաշտերը բազմազան են և բազմաբովանդակ, դրանց գործածությունը գեղարվեստական գրականության մեջ խիստ անհատական է և պայմանավորված գրողի հոգեբանական առարձնահատկություններով, ինչպես «անույշ գիշեր», «անգութ և մթին գիշեր»:
- Խորհրդանիշները տարբերվում են խորհրդապաշտությունից, վերջինս վերաբերում է գրականագիտությանը, իսկ խորհրդանիշները բացահայտում են բառերի իմաստային դաշտերի նորանոր եզրեր, որոնք կիրառվում են գեղարվեստում, արվեստում՝ բացահայտելով, երբեմն քողարկելով կիրառողի հոգեապրումները:
- Խորհրդանշական բառերը ստեղծվում են տվյալ ստեղծագործության շրջանակներում, նրանք վերաբերում են միայն իմաստային դաշտին, չեն կարող առանձնանալ բառապաշարում իբրև կայուն շերտ:
- Իմաստաբանությունը առաջարկում ենք ուսուցանել նախագծի միջոցով: Նախագծերը սովորողների մոտ զարգացնում են ստեղծագործական, որոնողական կարողություններ:

Գրականություն

1. **Աճառյան Հ. Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հտ. VI. Իմաստաբանություն, բառաքնություն, շարահյուսություն, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2005, 349 էջ:
2. **Эко У.**, Роль читателя. Исследования по семиотике текста, Москва, РГГУ, 2005, 501 с.
3. **Ջրբաշյան Ա. Է.**, Գրականության տեսություն և գեղագիտություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2024, 317 էջ:
4. **Խաչատրյան Լ. Մ.**, Ճանաչողական լեզվաբանության հարցեր // Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները: Զեկուցումների միջազգային համաժողովի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014, էջ 266-273:
5. **Современная американская лингвистика:** Фундаментальные направления, Москва, Издательство ЛКИ, 2016, 478 с.
6. **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հտ. 1 (Ա-Ձ), Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1976, 929 էջ:

7. **Համբարձումյան Վ. Գ.**, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, «Վան Արյան» հրատարակչություն, 2019, 366 էջ:
8. **Ջրբաշյան Էդ. Մ., Մախչանյան Հ. Մ.**, Գրականագիտական բառարան, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980, 321 էջ:
9. **Եզեկյան Լ. Կ.**, Ոճագիտության ուղեցույց, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2007, 115 էջ:
10. **Բեդիրյան Պ. Ս.**, Հայերենի դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, 1410 էջ:
11. **Գալստյան Ա. Ս., Թովմասյան Թ. Ս.**, Մայրենի 6: Հանրակրթական դպրոցի դասագիրք, Երևան, «Արևիկ» հրատարակչություն, 2023, 136 էջ:
12. **Մեյթիխանյան Փ. Գ.**, Հայոց լեզու 10: Դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և հումանիտար հոսքերի համար, Երևան, «Էդիթ Պրինտ», 2024, 160 էջ:
13. **Հարությունյան Կ. Ռ., Բարսեղյան Հ. Ա., Գալստյան Ն. Ս., Մանուչարյան Ա. Ռ.**, Հասարակագիտություն 10: Դասագիրք ավագ դպրոցի համար, Երևան, «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ, 2024, 128 էջ:
14. **ԿԶՆԱԿ հիմնադրամ:** Բնագավառներ [Էլեկտրոնային ռեսուրս], URL: blogspot.com.

WORDS MEANING ADVICE IN ARMENIAN AND THEIR TEACHING IN HIGH SCHOOL

Ashkhen L. Yuzbashyan

Pedagogical University named after Kh.Abovyan,

Yerevan, Tigran Mets Ave, 17,

e-mail: ashkhenyuzbashyann@gmail.com

0000-0002-7726-857X

Abstract

In this article, we examine the semantic and linguistic nature of symbolic words. Since a comprehensive investigation of this extensive subject cannot be fully conducted within the limits of a single article, certain restrictions have been applied. We have examined symbolic words in fiction, paying close attention to the semantic-functional field of these words. The selection of source material was carried out according to the principle of diachronicity, drawing from texts spanning the 5th to the 20th centuries, including translated literature, thereby demonstrating that symbolic words remain stable even within the field of translation. We have investigated symbolic words in spiritual, artistic, and scientific texts, endeavoring to illustrate the semantic layers of these words and, at times, their transformation into concepts such as freedom, rebellion, defiance, light, night, and others.

We have also addressed certain aspects of teaching these words, particularly project-based learning at the high school level. We place considerable importance on project-based learning, especially in Armenian language classes, as it encourages students to conduct independent academic

research, present it to an audience, and produce genuine scholarly value, since these outcomes are the fruits of the students' own independent inquiry.

Keywords: symbol, allegory, metaphor, cognitive linguistics, textual code, semantics.

Novelty

In this article, we have attempted to study the word within its semantic field, demonstrating its transformation into symbols within literary texts. The study of various strata of vocabulary is of both scientific interest and practical significance. Linguists have addressed these questions at different times, including V. Arakelyan in *Outlines of the History of the Armenian Literary Language (5th Century)*, P. Meytikhanyan in *Onomastics of the Bible (Transliteration, Orthography)*, and A. Abajyan, N. Dilbaryan, A. Yuzbashyan, and S. Karapetyan in the study *Grabar (Old Armenian) as a Source for the Enrichment of Modern Eastern Armenian Vocabulary and Term Formation*. The novelty of our research lies in identifying symbolic words within literature, attempting to trace the path by which a word from the common lexical stratum transforms into a symbol, as well as addressing the methodology of teaching these words at the high school level, emphasizing their role in the process of shaping human linguistic thought.

Conclusion

Having examined certain characteristics of the semantic fields of words, we arrived at the following conclusions:

- The semantic fields of words are diverse and multifaceted; their use in fiction is deeply individual and conditioned by the psychological characteristics of the writer, as clearly seen in such authorial expressions as "sweet night" versus "merciless and dark night."
- Symbols differ from Symbolism: the latter pertains to the field of literary studies, whereas symbols reveal ever-new dimensions of the semantic fields of words employed in literature and art to express — and at times to conceal — the emotional and inner experiences of their creator.
- Symbolic words are created within the framework of a specific literary work; they pertain exclusively to the semantic field and cannot be distinguished within the vocabulary of a language as a stable stratum.
- We propose that semantics be taught through project-based work. Projects develop students' creative and investigative competencies.

СИМВОЛИЧЕСКИЕ СЛОВА В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ И ИХ ПРЕПОДАВАНИЕ В СТАРШЕЙ ШКОЛЕ

Ашхен Л. Юзбашян

Педагогический университет имени Х.Абовяна,

Ереван, пр. Тигран Меца, 17,

e-mail: ashkhenyuzbashyann@gmail.com

0000-0002-7726-857X

Аннотация

В данной статье мы рассмотрели семантическую и лингвистическую природу символических слов. Поскольку всестороннее изучение этой обширной темы не представляется возможным в рамках одной статьи, мы установили определённые ограничения. Мы рассмотрели символические слова в художественной литературе, уделив особое внимание семантико-функциональному полю данных слов. Отбор исходного материала осуществлялся по принципу диахроничности на основе текстов V–XX веков, включая переводную литературу, что позволило продемонстрировать устойчивость символических слов даже в сфере перевода. Мы исследовали символические слова в духовных, художественных и научных текстах, стремясь раскрыть семантические пласты этих слов и, в ряде случаев, их трансформацию в концепты, такие как свобода, бунт, непокорность, свет, ночь и другие.

Также были рассмотрены отдельные аспекты преподавания данных слов, в частности проектное обучение в старшей школе. Мы придаём большое значение проектному обучению, особенно на уроках армянского языка, поскольку оно побуждает учащихся проводить самостоятельные научные исследования, представлять их аудитории и создавать научные ценности — подлинные ценности, являющиеся плодом собственного независимого поиска учеников.

Ключевые слова: символ, аллегория, метафора, когнитивная лингвистика, текстовый код, семантика.

Новизна

В данной статье мы предприняли попытку изучить слово в его семантическом поле, показав его трансформацию в символы в рамках художественного текста. Изучение различных пластов лексики представляет как научный интерес, так и практическую значимость. В разное время к этим вопросам обращались такие лингвисты, как В. Аракелян в труде «Очерки истории армянского литературного языка (V в.)», П. Мейтиханян в работе «Ономастика Библии (транслитерация, орфография)», а также А. Абаджян, Н. Дилбарян, А. Юзбашян и С. Карапетян в исследовании «Грабар как источник обогащения словарного состава и терминообразования современного восточноармянского языка».

Новизна нашего исследования состоит в выявлении символических слов в художественной литературе, в попытке проследить путь, по которому слово из общеупотребительного лексического пласта превращается в символ, а также в рассмотрении методики преподавания этих слов в старшей школе с акцентом на их роли в процессе формирования языкового мышления человека.

Заключение

Рассмотрев отдельные характеристики семантических полей слов, мы пришли к следующим выводам:

- Семантические поля слов отличаются разнообразием и многогранностью; их употребление в художественной литературе глубоко индивидуально и обусловлено психологическими особенностями писателя, что наглядно проявляется в таких авторских употреблениях, как «сладкая ночь», «безжалостная и тёмная ночь».
- Символы отличаются от символизма: последний относится к области литературоведения, тогда как символы раскрывают всё новые измерения семантических полей слов, используемых в литературе и искусстве для выражения — а порой и сокрытия — внутренних переживаний их создателя.
- Символические слова создаются в рамках конкретного произведения; они относятся исключительно к семантическому полю и не могут быть выделены в словарном составе языка в качестве устойчивого пласта.
- Мы предлагаем преподавать семантику посредством проектной деятельности. Проекты развивают творческие и исследовательские компетенции учащихся.